Հուսիկ Արա

Ամբողջ երկիրը քեզ հետ տարար

Դու չես կրկնվի,
որովհետև այդպես իմ սիրտն է ցանկանում:

Փնտրեցի ու չգտա նմանակը բառի՝
միա՛կս,
որ ասել եմ քեզ:
Գույների մեջ մինուճարը
դու ես,
որ առաջինն էր ու վերջինը,
և իմ աշխարհից տարար քեզ հետ:

Ես չեմ ասում՝ քո գնալուց թող լույս մնա,
որովհետև այդ ճանապարհով ուրիշ մեկը չի հեռանալու:
Անիմաստ է աշխարհում ամեն բան,
ինչն առանց քեզ է.
օդը չունի շունչ,
ջուրը չունի ընթացք,
հացը չունի բուրմունք,
և գույն չունի լույսը,
ու տիեզերքի երկու կողմն էլ մութ է:

Քեզ չեմ ասում ցտեսություն,
որովհետև էլ երբեք ու նորից չենք տեսնվելու:

Միայն
իմ երկրի հնամենի արքայի նման
ողբում եմ ողբը ունայնության.
երբ դու գնացիր՝
ամբողջ երկիրը քեզ հետ տարար,
ես այս ավերակների վրա
ինչպե՞ս թագավորեմ: